"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 148-Լ

«09» փետրվարի 2024 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝

հրամայում եմ.

1. Հաստատել «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տոմսերի վաճառքի կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տոմսերի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հանձնարարել տոմսերի առցանց վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը հրապարակել «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, ինտերնետային կայքում, ինչպես նաև այն փակցնել Թատրոնի տոմսարկղում, Թատրոնի մուտքի մոտ:

4. Հանձնարարել տոմսային տնտեսության վարիչին՝

1) կազմակերպել սույն տոմսերի տպագրումը սույն կարգի պահանջներին համապատասխան,

2) կազմակերպել սույն կարգի հրատարակումը, որպեսզի անհրաժեշտության դեպքում այն տրամադրվի հանդիսատեսին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի հրապարակմանը հաջորդող օրվանից:

Թատրոնի տնօրեն՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«09» փետրվարի 2024 թ.

Հավելված N 1
«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և
բալետի ազգային ակադեմիական
թատրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի
2024 փետրվարի 9-ի N 148-Լ հրամանի

_____ Կ. Դուրգարյան

ԿԱՐԳ
«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կողմից տոմսերի ձևը, դրա վաճառքի, հետ վերադարձման կարգերը, ինչպես նաև այդ կապակցությամբ հանդիսատեսի ու Թատրոնի միջև առաջացող այլ իրավահարաբերությունները:

2. Տոմսը Թատրոնի թատերահամերգային ծառայություններից (այսուհետ՝ ներկայացում) օգտվելու իրավունքը հավաստող փաստաթուղթ է:

3. Թատրոնի տոմսը գնելով կամ այլ կերպ ձեռքբերելով՝ անձը կամ կազմակերպությունը Թատրոնի հետ կնքում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի համաձայն տոմս ձեռք բերողը կամ համապատասխան տոմս ունեցող հանդիսատեսը ձեռք է բերում Թատրոնի կողմից կազմակերպվող համապատասխան ներկայացման կամ միջոցառման կամ արարողության, այսուհետ՝ ներակայացում, դիտելու իրավունք, իսկ Թատրոնը պարտավորվում է ցուցադրել այդ ներկայացումը, ինչպես նաև մատուցել սահմանված այլ ծառայություններ: Թատրոնի տոմս ունեցող հանդիսատեսը պարտավորվում է Թատրոնում պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները, ինչպես նաև սույն կարգի, Թատրոնում հանդիսատեսի վարվելակերպի, Թատրոնի ներքին իրավական այլ ակտերի կանոնները, որոնք սույն կետում նշված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի՝ տոմսի, բաղկացուցիչ մասերն են:

4. Հրավիրատոմսով թատրոն մուտք գործած անձի վրա տարածվում են տոմսով մուտք գործած հանդիսատեսի համար սույն կարգով սահմանված բոլոր պարտականություններն ու պահանջները: Նրանք կրում են նաև տոմս ունեցող անձանց համար սահմանված պատասխանատվության միջոցները: Հրավիրատոմսով Թատրոն մուտք գործած անձինք չունեն հանդիսատեսի համար նախատեսված բոլոր իրավունքները: Թատրոնը պարտավոր չէ հատուցել հրավիրատոմս ունեցող անձանց վնասները և որևէ պատասխանատվություն չի կրում ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար: Առանձին դեպքերում Թատրոնի տնօրենի կողմից հրավիրատոմսեր ունեցող անձանց համար կարող են սահմանվել այլ իրավունքներ կամ պարտականություններ:

5. Տոմսը ոչ անձնավորված է: Այն կարող է օգտագործվել տոմսը ներկայացնող ցանկացած ֆիզիկական անձի կողմից:

6. Սույն կարգի համաձայն հանդիսատես է համարվում Թատրոնի թատերահամերգային ծառայություններից օգտվելու համար տոմս ձեռք բերած կամ Թատրոնին տոմս կամ հրավիրատոմս ներկայացրած կամ տոմսով կամ հրավիրատոմսով Թատրոն մուտք գործած ցանկացած ֆիզիկական անձ:

7. Հանդիսատեսը պարտավոր է պահպանել Թատրոնի՝ հանդիսատեսի համար սահմանված բոլոր կանոնները:

8. Հանդիսատեսն իրավունք ունի Թատրոնի տոմսերը ձեռքբերել թատրոնի տոմսարկղերից, ինչպես նաև Թատրոնի ներկայացուցիչներից: Տոմսերը կարող են ձեռքբերվել նաև էլեկտրոնային եղանակով:

9. Յուրաքանչյուր ներկայացման համար տոմսերի վաճառքը սկսվում է ոչ ուշ, քան ներկայացման օրվանից 20 օր առաջ: Ներկայացման տոմսերի վաճառքն ավարտվում է տվյալ ներկայացման սկսվելու պահից, եթե Թատրոնի կողմից այլ ժամկետ սահմանված չէ:

10. Թատրոնի տոմսը վաճառվում է միայն 14 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձանց, այսուհետ՝ անձ: Անհրաժեշտության դեպքում տոմսը վաճառող անձն իրավունք ունի տոմսի գնորդից պահանջել անձը կամ ինքնությունը հաստատող որևէ փաստաթուղթ՝ գնորդի տարիքը ճշտելու համար:

11. Թատրոնի կողմից տոմսերը կարող են վաճառվել նաև իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, հիմնարկներին:

12. Սույն կարգը չի տարածվում Թատրոնի տարածքում այլ անձանց կողմից կազմակերպված ներկայացումները դիտելու համար վաճառված տոմսերի վրա:

13. Տոմս գնելիս ու մինչև ներկայացման սկիզբը յուրաքանչյուր հանդիսատես պարտավոր է լիարժեք ծանոթանալ սույն կարգի, Թատրոնում հանդիսատեսի վարվելակերպի, ինչպես նաև հանդիսատեսի համար սահմանված Թատրոնի այլ ներքին իրավական ակտերի կանոններին: Ընդ որում՝ սույն կարգը, Թատրոնում հանդիսատեսի վարվելակերպի, ինչպես նաև հանդիսատեսի համար սահմանված Թատրոնի այլ ներքին իրավական ակտերին հանդիսատեսը կարող է ծանոթանալ Թատրոնի ինտերնետ կայքում, ինչպես նաև Թատրոնի տոմսարկղում կամ Թատրոնի հանդիսատեսի համար նախատեսված մուտքի մոտ: Սույն կարգի, Թատրոնում հանդիսատեսի վարվելակերպի, ինչպես նաև հանդիսատեսի համար սահմանված Թատրոնի այլ ներքին իրավական ակտերի կանոններին հանդիսատեսի կամ տոմս ձեռքբերողի չծանոթանալու փաստը հիմք չէ հանդիսատեսի կողմից դրանց պահանջները չկատարելու կամ այդ պահանջների խախտման համար պատասխանատվության չենթարկվելու համար:

14. Սույն կարգի պահանջները տարածվում են նաև այն հանդիսատեսների վրա, որոնք թեև իրենք չեն գնել տոմս, սակայն այն ներկայացրել են Թատրոն մուտք գործելու համար կամ տոմսով մուտք են գործել Թատրոն:

15. Յուրքանչյուր տոմս նախատեսված է մեկ անձի համար՝ անկախ տարիքից:

16. Տոմսի կամ հրավիրատոմսի վրա պետք է նշվեն.

1) Թատրոնի լրիվ անվանումը.

2) Ներկայացման անվանումը.

3) Ներկայացման վայրը, օրը, ժամը.

4) Այն ժամկետը, որից հետո արգելվելու է հանդիսատեսի մուտքը դահլիճ.

5) Հանդիսատեսի տեղը Թատրոնի դահլիճում.

6) Ծառայությունների մատուցման գինը՝ տոմսի արժեքը, բացառությամբ հրավիրատոմսի

7) QR կոդը՝ բացառությամբ հրավիրատոմսի

8) Թատրոնի ներքին իրավական ակտերին ծանոթացած լինելու պահանջ՝

Սույն տոմսը գնելով կամ այն Թատրոն ներկայացնելով՝ ես հայտնում եմ, որ ծանոթացել եմ Թատրոնում հանդիսատեսի համար սահմանված բոլոր կանոններին և պարտավորվում եմ դրանք պահպանել.

9) Այլ անհրաժեշտ տվյալներ:

17. Հանդիսատեսն իրավունք ունի ներկայացում դիտելու համար մուտք գործել Թատրոն միայն տոմսով կամ հրավիրատոմսով՝ Թատրոնի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

18. Տոմսը կամ հրավիրատոմսը կորցնելու կամ ոչնչացնելու դեպքում այն չի վերականգնվում: Տոմսը կամ հրավիրատոմսն անընթեռնելի դառնալու, պատառոտված լինելու, էլեկտրոնային կոդը վնասված կամ անընթեռնելի լինելու, էլեկտրոնային կոդը բացակայելու կամ էլեկտրոնային կոդը կեղծ

լինելու կամ նշված էլեկտրոնային կոդը սահմանված կարգին չհամապատասխանելու դեպքում տոմսը համարվում է անվավեր:

19. Հանդիսատեսն իրավունք ունի վերադարձնել տոմսը: Այս դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն հանդիսատեսին վերադարձվում է միայն տոմսի համար Թատրոնին վճարված գումարը՝ Թատրոնի կողմից կատարված փաստացի ծախսերը վճարելու պայմանով: Այդ ծախսերը մասնավորապես ներառում են տպագրական ծախսերը, վաճառքի ծախսերը, ներկայացումների գովազդի ծախսերը, հաշվապահության կողմից անհրաժեշտ վերահաշվարկների համար ծախսերը և այլն:

20. Եթե տոմսը վերադարձվում է ներկայացման օրվանից մինչև 10 օր առաջ, ապա Թատրոնի կողմից կատարված փաստացի ծախսերի վճար չի գանձվում: Եթե տոմսը վերադարձվում է ներկայացման օրվանից 10 օրից մինչև 5 օր առաջ, ապա գանձվում է Թատրոնի կողմից կատարված փաստացի ծախսերի վճար՝ տոմսի գնի 50 տոկոսի չափով: Եթե տոմսը վերադարձվում է ներկայացման օրվանից 5 օրից մինչև 3 օր առաջ, ապա գանձվում է Թատրոնի կողմից կատարված փաստացի ծախսերի վճար՝ տոմսի գնի 70 տոկոսի չափով: Ներկայացման օրվանից 3 օր առաջ տոմսերը հետ չեն ընդունվում:

21. Տոմսի արժեքը վճարվում է միայն այն վերադարձնող անձին: Տոմսի վերադարձման դեպքում այն վերադարձնողից, բացի տոմսից պահանջվում է նաև տոմսի գնումը հաստատող ՀԴՄ կտրոնը: Առցանց գնված տոմսերի վերադարձը կատարվում է համապատասխան դիմում և հիմնավորող այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Տոմսի արժեքը չի վերադարձվում 14 տարեկան չդարձած կամ անգործունակ անձանց: Եթե տոմսը հետ վերցնող անձը կասկածներ ունի տոմսը վերադարձնող անձի տարիքի վերաբերյալ, ապա նա իրավունք ունի տոմսը վերադարձնողից պահանջել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

22. Տոմսի արժեքի վերադարձման կարգը անփոփոխ է՝ անկախ այն պատճառներից, որոնք հիմք են հանդիսացել տոմսը վերադարձնելու համար, բացառությամբ օրենքով կամ սույն կարգով նախատեսված դեպքերի:

23. Ոչ Թատրոնի մեղքով հանդիսատեսի կողմից ներկայացմանն ուշանալու կամ ներկայացումը ցանկացած հիմքով չդիտելու դեպքում տոմսի արժեքը չի վերադարձվում: Տոմսի արժեքը չի վերադարձվում նաև ՀՀ օրենսդրության պահանջների, ինչպես նաև սույն կարգի, Թատրոնում հանդիսատեսի վարավելակերպի կանոնների խախտման պատճառով հանդիսատեսին Թատրոնից դուրս հրավիրելու կամ Թատրոն մուտքն արգելելու դեպքում:

24. Թատրոնն իրավունք ունի մինչև ներկայացման օրը փոխել ներկայացման օրը կամ ժամը կամ իր կողմից հայտարարված ներկայացման մասնակիցներին կամ դերակատարներին: Թատրոնն իրավունք ունի չեղարկելու տվյալ օրվա ներկայացումը: Ներկայացման օրը կամ ժամը փոխելու կամ ներկայացումը չեղարկելու դեպքում Թատրոնը պարտավոր է այդ մասին ոչ ուշ քան մեկ օր առաջ հայտարարել իր ինտերնետային կայքէջում և ֆեյսբուքի պաշտոնական էջում: Տոմսի արժեքը վերադարձվում է, եթե ներկայացումը չեղարկվել է կամ ներկայացումը ամբողջությամբ չի ցուցադրվել: Այս դեպքում վերադարձվող տոմսն ընդունվում է նախատեսվող ներկայացման օրվանից հետո՝ 14 օրվա ընթացքում:

25. Հանդիսատեսն իրավունք ունի վերադարձնել տոմսը, եթե տոմսում նշված ներկայացման փոխարեն ներկայացվելու է այլ ներկայացում: Այս դեպքում տոմսի արժեքը վերադարձվում է, եթե հանդիսատեսը այդ տոմսով մուտք չի գործել Թատրոն: Սույն կետում նշված վերադարձվող տոմսն ընդունվում է նախատեսվող ներկայացման օրվանից հետո՝ 14 օրվա ընթացքում:

26. Հանդիսատեսն իրավունք ունի վերադարձնել տոմսը, եթե փոխվել է ներկայացման օրը կամ ներկայացումը տեղի է ունենալու տոմսում նշված ժամից ոչ պակաս քան չորս ժամ տարբերությամբ: Այս դեպքում տոմսի արժեքը վերադարձվում է, եթե հանդիսատեսը այդ տոմսով մուտք չի գործել Թատրոն:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Սույն կետում նշված վերադարձվող տոմսն ընդունվում է նախատեսվող ներկայացման օրվանից հետո՝ 14 օրվա ընթացքում:

27. Տոմսը կարելի վերադարձնել կամ փոխանակել միայն տոմսարկղերում ու միայն տոմսարկղի աշխատանքային օրերին և ժամերին, էլեկտրոնային եղանակով գնված տոմսերը՝ միայն էլեկտրոնային եղանակով:

28. Հանդիսատեսն իրավունք ունի իր տոմսը փոխանակել Թատրոնի համարժեք այլ տոմսով, եթե փոխվել է ներկայացման օրը կամ ժամը, կամ եթե չեղարկվել է ներկայացումը, ինչպես նաև ներկայացումից հինգ օր առաջ:

29. Հանդիսատեսը պարտավոր է պահպանել իր տոմսը մինչև Թատրոնի տարածքից դուրս գալը: Հանդիսատեսը պարտավոր է Թատրոնի տարածքում, Թատրոնի ներկայացուցչի պահանջով ներկայացնել տոմսը:

30. Թատրոնի որևէ ներկայացուցիչ իրավունք չունի վերցնել հանդիսատեսի տոմսը, բացառությամբ այն դեպքերի, երբ կասկած է առաջացել, որ տվյալ տոմսը կարող է կեղծ լինել կամ այն չի նախատեսված տվյալ ներկայացման համար կամ այն չի վաճառված Թատրոնի կամ նրա ներկայացուցչի կողմից:

31. Ներկայացման ժամանակ Թատրոնի տարածքից դուրս եկած անձն իրավունք ունի իր մոտ առկա տոմսով մուտք գործել Թատրոն՝ ներկայացման շարունակությունը դիտելու համար, եթե դուրս գալիս այդ մասին զգուշացրել է հանդիսատեսի օգնականին:

32. Թատրոնում կարող են կիրառվել Թատրոնի տնօրենի կողմից սահմանված տոմսեր գնելու զեղչեր:

33. Հենաշարժական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ու նրանց ուղեկցողների համար կարող են վաճառվել առանձին տոմսեր: Այլ բնույթի հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց ներկայացուցիչների դիմումով տվյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար, Թատրոնի հնարավորության սահմաններում, կարող են նախատեսվել ներկայացումները դիտելու համապատասխան պայմաններ:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

34. Էլեկտրոնային եղանակով տոմս գնելու դեպքում անձն իրավունք ունի Թատրոնի տոմսը գնելու նպատակով ամրագրել տոմսը՝ էլեկտրոնային համակարգով սահմանված ընթացակարգով: Անձը տոմսն ամրագրելիս պետք է նշի ներկայացման անվանումը, ներկայացման օրը և ժամը, տեղը դահլիճում, տոմսի գինը, ինչպես նաև այն էլեկտրոնային հասցեն, որին Թատրոնն ուղարկելու է տոմսի ամրագրման հաստատումը: Տոմսն ամրագրված է համարվում Թատրոնի կողմից ամրագրողին համապատասխան էլեկտրոնային տեղեկատվության ուղարկման պահից:

35. Անձն իրավունք ունի ամրագրել ոչ ավելի, քան 10 տոմս, բացառությամբ թատրոնի ներկայացուցիչների: Տոմսի ամրագրումը չի կարող իրականացվել ներկայացման օրվանը նախորդող 6 օր առաջ: Տոմսն ամրագրված է մնում 3 օր: Եթե մինչև տոմսի ամրագրման ժամկետի ավարտը անձը չի գնում ամրագրված տոմսը, ապա ամրագրումը վերացվում է:

36. Անձն իրավունք ունի ցանկացած պահի էլեկտրոնային եղանակով վերացնել տոմսի կամ տոմսերի ամրագրումը:

37. Թատրոնն իրավունք ունի առանձին ներկայացումների համար չնախատեսել տոմսերի ամրագրում, ինչպես նաև սահմանափակել ամրագրման ենթակա ընդհանուր տոմսերի քանակը:

38. Թատրոնն իրավունք ունի ցանկացած պահի վերացնել բոլոր ամրագրումները և դրա համար չի կրում որևէ պատասխանատվություն տոմսն ամրագրած անձի առջև:

Հավելված 2
«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և
բալետի ազգային ակադեմիական
թատրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի
2024 փետրվարի 9-ի N 148-Լ հրամանի

_____ Կ. Դուրգարյան

ՁԵՎ
«Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տոմսերի

Դիմերես

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ
ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ
PERFORMANCE

Ներկայացման օր
Date

Ներկայացման ժամ
Time

QR-ԿՈԴ

Պարտեր/Ամֆիթատրոն/Օթյակ
Parterre/Amphitheater/Balcony

Շարք
Row

Տեղ
Seat

Գին/Price

Սրահը թատրոնի շենք նշանակումը սկսվելու 40 րոպե առաջ: Ներկայացումը սկսվելուն պես, մուտքը դահլիճ արգելվում է:
Entrance to the theater building 40 minutes before the start of the performance. As soon as the performance begins, entry to the hall is prohibited.

Դարձերես

Սույն տոմսը գնելով կամ այն Թատրոն ներկայացնելով՝ ես հայտնում եմ, որ ծանոթացել եմ Թատրոնում հանդիսատեսի համար սահմանված բոլոր կանոններին և պարտավորվում եմ դրանք պահպանել:

Приобретая данный билет или предъявляя его в Театре, я заявляю, что ознакомился со всеми правилами Театра, установленными для зрителей, и обязуюсь их соблюдать.

By purchasing this ticket or presenting it at the Theatre, I confirm that I am acquainted with all the rules established for spectators and commit to following them..

QR-ԿՈԴ